ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» «----------» 2020թ. **N----- -Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԴ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետով, 69-րդ հոդվածի 2-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով ու 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝

Երևանի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ավագանու հաստատմանը ներկայացնել սույն որոշումից բխող՝ Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ավագանու որոշման նախագիծը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2020 թվականի --------- --ի
N ---Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԴ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի (այսուհետև՝ քաղաք) սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների և դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների, այդ լիազորությունների իրականացման և համապատասխան չափորոշիչների հետ կապված հարաբերությունները:

2. Քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրներն են՝

1) պետական բարձրագույն, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող քաղաքի սոցիալապես անապահով ընտանիքների անդամների ուսման վարձի մասնակի հատկացումը.

2) Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով, մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած), ինչպես նաև հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների, ինչպես նաև հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և նրանց հավասարեցված անձանց ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման աջակցումը.

3) անհետաձգելի սոցիալական լուծում պահանջող խնդիրների լուծումը, եթե դրանք պարտադիր խնդիրների շրջանակներում չեն լուծվում կամ հնարավոր չէ ապահովել դրանց հրատապ լուծումը.

4) տարերային և տեխնածին վտանգով պայմանավորված աղետների ու տնտեսական ցնցումների դեպքում բնակչությանն անհետաձգելի օգնության տրամադրումը:

3. Քաղաքի կամավոր խնդիրների լուծման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝

1) աջակցություն է ցուցաբերում պետական բարձրագույն, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող քաղաքի սոցիալապես անապահով ընտանիքների անդամների ուսման վարձի մասնակի վճարման կազմակերպմանը.

2) միջոցներ է ձեռնարկում Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով, մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած), ինչպես նաև հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների, ինչպես նաև հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և նրանց հավասարեցված անձանց (ընտանիքների) սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.

3) կազմակերպում է սույն կարգի 2-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերում սահմանված կամավոր խնդիրների լուծումը՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով պետական, համայնքային, միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ.

4. Քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման համար քաղաքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները չեն կարող գերազանցել տվյալ տարվա համար Երևան համայնքի բյուջեում օրենքով ներկայացված մուտքերի աղբյուրներից միջոցների ստացումների ընդհանուր ծավալի 3%-ը: :

5. Կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումն իրականացվում է քաղաքի տարեկան բյուջեն հաստատելու մասին քաղաքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) որոշմամբ:

6. Քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման ֆինանսավորումը կարող է իրականացվել նաև օրենքով չարգելված այլ միջոցներով:

7. Այն դեպքում, երբ Երևանի քաղաքապետի կողմից կամավոր խնդիրների լուծման համար չի պահանջվում ֆինանսական կամ գույքային միջոցների հատկացում՝ Երևանի քաղաքապետն այն իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

8. Կամավոր խնդիրների լուծման իրականացման առաջարկություն կարող են ներկայացնել քաղաքապետը, ավագանու անդամը կամ քաղաքի վարչական շրջանի ղեկավարը (այսուհետ՝ նախաձեռնող): Սույն կարգով նախատեսված գործառույթները նախաձեռնողն իրականացնում է քաղաքի վարչական շրջանի համապատասխան բաժնի (այսուհետ՝ բաժին) միջոցով:

9. Սույն կարգի 8-րդ կետում նշված անձինք սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման նախաձեռնությունը կարող են իրականացնել ինքնուրույն կամ բնակչի, միջազգային, հասարակական կազմակերպության կամ միավորման, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների դիմումների հիման վրա:

10. Բաժինը նախապատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերի և ուսումնասիրությունների հիման վրա կազմված սոցիալական ծրագիր (այսուհետ՝ ծրագիր), որը ներկայացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան վարչություն (այսուհետ՝ վարչություն)՝ մասնագիտական կարծիք ստանալու նպատակով: Բացասական մասնագիտական կարծիքի դեպքում ծրագիրը մերժվում է կամ համապատասխան հիմնավորումների և առաջարկությունների հետ վերադարձվում է բաժին՝ լրամշակման նպատակով: Դրական մասնագիտական կարծիքի դեպքում ծրագիրը ներկայացվում է Երևանի քաղաքապետին կից հասարակական հիմունքներով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ):

11. Խորհրդի կազմավորման և գործունեության կարգը սահմանում է քաղաքի ավագանին:

12. Խորհուրդը, քննարկելով համապատասխան ծրագրերը, յուրաքանչյուրի վերաբերյալ երկօրյա ժամկետում վարչություն է ներկայացնում հիմնավորված դրական կամ բացասական եզրակացություն։

13 Վարչությունը խորհրդի բացասական եզրակացության դեպքում՝

1) բաժնի միջոցով վերացնում է եզրակացությունում նշված թերությունները և լրամշակված ծրագիրը կրկին ներկայացնում խորհրդին կամ

2) ծրագրի մերժման դեպքում՝ այն վերադարձնում է բաժին՝ օրենսդրությամբ սահմանված ընթացքն ապահովելու համար:

14. Վարչությունը խորհրդի դրական եզրակացության դեպքում՝

1) երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը պահանջում է նվազագույն ամսական աշխատավարձի հինգհազարապատիկը չգերազանցող գումար, համապատասխան որոշման նախագիծը ներկայացնում է Երևանի քաղաքապետին,

2) երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը պահանջում է նվազագույն ամսական աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումար, ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է քաղաքի ավագանու հաստատմանը, որից հետո համապատասխան որոշման նախագիծը ներկայացնում է Երևանի քաղաքապետին։

15. Սույն կարգի 8-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված գործառույթների իրականացման ընդհանուր ժամկետը չպետք է գերազանցի 30-օրը։

16. Անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող, ինչպես նաև տարերային և տեխնածին վտանգով պայմանավորված աղետների ու տնտեսական ցնցումների դեպքում ու արտակարգ իրավիճակների ժամանակ սույն կարգով սահմանված գործողությունները կատարվում են անհապաղ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում:

17. Քաղաքի բյուջեի միջոցներից տրամադրվող սոցիալական աջակցության տեսակներն են՝

1) դրամական օգնությունը.

2) սոցիալական ծառայությունների տրամադրումը:

18. Սույն կարգի 17-րդ կետով նախատեսված սոցիալական աջակցություն տրամադրելիս հաշվի են առնվում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սոցիալական կարիքները և անապահովության գնահատման հետևյալ բնութագրիչներից մեկը կամ մի քանիսը միաժամանակ՝

1) քաղաքում հաշվառված լինելը,

2) ընտանիքի կազմը և ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը,

3) ընտանիքի անաշխատունակ անդամների թիվը,

4) ընտանիքում երեխաների, տարեց, հաշմանդամություն ունեցող անձանց քանակը և տարիքը,

5) ընտանիքի եկամուտը և կենսապահովման միջոցները,

6) ընտանիքի բնակարանային պայմանները,

7) քաղաքապետի, ավագանու անդամի, քաղաքապետարանի աշխատակազմի և քաղաքային ենթակայության կազմակերպության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի կամ համայնքային ծառայողի հետ համատեղ տնտեսություն վարելը:

19. Սույն կարգի 18-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված բնութագրիչի բացակայությունը, ինչպես նաև 7-րդ ենթակետով նախատեսված բնութագրիչի առկայությունը բացառում է սույն կարգով դրամական օգնության տրամադրումը:

20. Սույն կարգի 18-րդ կետի 2-6-րդ ենթակետերով նախատեսված բնութագրիչները հաշվի են առնվում աջակցության ծավալը և չափը որոշելու համար:

21. Դրամական օգնությունը տրամադրվում է սոցիալական աջակցություն տրամադրելու այլ միջոցները քննարկելուց հետո և որպես բացառիկ միջոց՝ ելնելով բաժնի համապատասխան մասնագետի անհատական գնահատումից և այլ եղանակով առկա խնդիրները լուծելու անհնարինության դեպքում:

22. Հիմք ընդունելով սույն կարգի 18-րդ կետով նախատեսված բնութագրիչները՝ դրամական օգնությունը սահմանվում է հետևյալ չափորոշիչներին համապատասխան.

1) տարերային և տեխնածին վտանգով պայմանավորված աղետների ու տնտեսական ցնցումների հետևանքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք, ներառյալ՝ ընտանիքի անդամ կորցրած, տուժած (ժամանակավորապես կամ մշտապես չեն կարողանում ծավալել աղետից ու ցնցումներից առաջ բնականոն գործունեություն), ամբողջովին կամ մասնակի վնասված տուն և/կամ բնակարան, կենսապահովման միջոցները կորցրած անձինք (նվազագույն ամսական աշխատավարձի հիսնապատիկից հազարապատիկի չափով):

2) ընտանիքում երեխաների առկայությունը և նրանց առողջական խնդիրները, բազմազավակ (4 և ավելի երեխա ունեցող) և միածնող ընտանիքներ, ծնողական խնամքից զրկված, մասնավորապես՝ միակողմանի, երկկողմանի ծնողազուրկ երեխաներ (նվազագույն ամսական աշխատավարձի քսանապատիկից հարյուր հիսնապատիկի չափով).

3) ընտանիքի անդամներից մեկի կամ մի քանիսի երկարատև հիվանդությունը, ընտանիքում հաշմանդամություն ունեցող անձ (երեխա) ունենալու հանգամանքը, մանկուց հաշմանդամություն ունեցող երեխա, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք (նվազագույն ամսական աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով).

4) ընտանիքի անդամի մահը, ինչպես նաև կյանքի դժվարին այլ իրավիճակների (վարակիչ հիվանդություններ, համաճարակներ և այլն) պատճառներով առաջացած կարճատև ֆինանսական խնդիրների առկայությունը (նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով).

5) Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով, մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած), ինչպես նաև հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների, ինչպես նաև հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և նրանց հավասարեցված անձանց ընտանիքներ (նվազագույն ամսական աշխատավարձի հարյուրապատիկից հազարապատիկի չափով).

6) միայն կենսաթոշակառուներից, ծերության կամ հաշմանդամության նպաստառուներից բաղկացած ընտանիք լինելը (նվազագույն ամսական աշխատավարձի տասնապատիկից հինսնապատիկի չափով).

7) ապաստան հայցող և փախստականի կարգավիճակ ստացած անձանց ընտանիքներ (նվազագույն ամսական աշխատավարձի տասնապատիկից հարյուրապատիկի չափով).

8) ընտանեկան բռնության ենթարկված անձինք (նվազագույն ամսական աշխատավարձի տասնապատիկից հարյուրապատիկի չափով).

9) ազատազրկման վայրից վերադարձած անձինք, պրոբացիայի շահառուներ (նվազագույն ամսական աշխատավարձի տասնապատիկից հինսնապատիկի չափով)։

23. Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական աջակցություն կարող է հատկացվել ըստ կարիքի:

24. Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների ուսման վարձի մասնակի հատկացումը կարող է իրականացվել պետական բարձրագույն, մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորելու դեպքում: Ուսման վարձի հատկացում չի արվում քաղաքապետի, ավագանու անդամի, քաղաքապետարանի աշխատակազմի և քաղաքային ենթակայության կազմակերպության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի կամ համայնքային ծառայողի հետ մերձավոր ազգակցությամբ (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) կամ խնամիությամբ կապված անձանց, եթե նրանք վարում են ընդհանուր տնտեսություն:

25. Անհատական սոցիալական ծրագրերով տրամադրվող այլ ծառայությունները որոշվում են սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքներին համարժեք՝ «Սոցիալական աջակցության մասին» օրենքին համապատասխան:

26. Սույն կարգով սահմանված դեպքերում սոցիալական աջակցություն տրամադրելն իրականացվում է «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 7-րդ, 8-րդ, 20-րդ, 21-րդ և 24-րդ հոդվածերով սահմանված ծառայություններին, սկզբունքներին և լիազորություններին համապատասխան:

27. Սույն կարգի խախտմամբ տրամադրված սոցիալական աջակցության գումարները ենթակա են վերադարձման Երևան քաղաքի բյուջե՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԴ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Սահմանադրության (06.12.2015թ. խմբագրությամբ) 182-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված: Համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են օրենքով, իսկ կամավոր խնդիրները՝ համայնքի ավագանու որոշումներով:

Սահմանադրական նշված նորմի հիման վրա համապատասխան փոփոխություններ են կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» (16.12.2016թ. ՀՕ-237-Ն օրենքով) *և* «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» *(04*.10.2017թ. ՀՕ-137-Ն օրենքով) *օրենքներում:*

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (*16.12.2016թ. ՀՕ-237-Ն օրենքի խմբագրությամբ)* 10-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են ավագանու որոշմամբ:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով սահմանում է համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքապետը, օրենքով սահմանված սեփական և պետության պատվիրակած լիազորություններից բացի, օժտված է նաև ավագանու սահմանած կամավոր խնդիրների լուծմանն ուղղված լիազորություններով: Համայնքի կամավոր խնդիրները սահմանում է համայնքի ավագանին:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի համաձայն՝ ավագանին քաղաքապետի ներկայացմամբ որոշում է կամավոր խնդիրների լուծման նպատակով սահմանված սեփական լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի *(*16.12.2016թ. ՀՕ-237-Ն օրենքի *խմբագրությամբ)* 10-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծվում են համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով:

Սույն նախագծով նախատեսվում է սահմանել միայն Երևան համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները:

Նախագծում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների ներառման համար կողմնորոշիչ են եղել Երևանի զարգացման ծրագրերը, պրակտիկայում

բացահայտված և ձևավորված խնդիրների լուծման անհրաժեշտությունը, իսկ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչների մշակման համար հիմք են հանդիսացել նաև «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 18-րդ հոդվածի, 37-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները:

Նախագիծը մշակելիս հիմք է ընդունվել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումը:

Նախագծով նախատեսվում է սոցիալական աջակցությունը տրամադրել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կողմից մշակված սոցիալական ծրագրերի հիման վրա, որոնք ներկայացվելու են Երևան քաղաքի ավագանու կողմից ստեղծված Երևանի քաղաքապետին կից հասարակական հիմունքներով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդին:

Խորհրդի կողմից սոցիալական ծրագրի հաստատման դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը պահանջում է նվազագույն ամսական աշխատավարձի հինգհազարապատիկը չգերազանցող գումար, համապատասխան որոշումն ընդունվելու է Երևանի քաղաքապետի կողմից, իսկ, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը պահանջում է նվազագույն ամսական աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումար, ապա համապատասխան որոշումն ընդունվելու է Երևան քաղաքի ավագանու կողմից:

Նախագծով կարգավորվելու են սոցիալական աջակցության տեսակները, դրանց տրամադրման հասցեատերերը (շահառուները), սոցիալական աջակցության տրամադրման ընդհանուր և հատուկ ժամկետները ու այլ հարցեր:

Երևան համայնքի այլ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը կսահմանվի Երևան քաղաքի ավագանու մեկ այլ որոշմամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԴ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություններ կատարել Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԴ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Երևան համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու մասին»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, առարկության հեղինակը	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	3-րդ կետում նշված «ինքնակառավարման մարմիններն»-ը դարձնել «ինքնակառավարման մարմինը»	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն: Նաև եզակի թվով են ներկայացվել ենթակետերում թվարկվող գործողությունները:
2.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	4-րդ կետում «Երևան» բառը դարձնել «Երևանի» կամ ավելացնել «համայնքի» բառը	Ընդունվել է, կատարվել է համապատասխան ավելացում:
3.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	7 –րդ կետից հանել «կամ վարչական շրջանի ղեկավարը դրանք» բառերը փոխարինել «այն» բառով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
4.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	10-րդ կետում «Երևանի քաղաքապետարանին կից հասարակական հիմունքներով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհուրդ»-ը դարձնել «Երևանի քաղաքապետին կից հասարակական հիմունքներով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհուրդ»:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
5.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	13 և 14-րդ կետերում շեշտել, որ խոսքը խորհրդի դրական և բացասական եզրակացությունների մասին է:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
6.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	21-րդ կետից հանել «բացառությամբ սույն կարգի 22-րդ կետում նշված դեպքերի» բառերը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն

7.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	22 –րդ կետի 4-րդ ենթակետի գումարը առավելագույն շեմը կրճատել և դարձնել հարյուրապատիկ:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
8.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	22-րդ կետի 10-րդ ենթակետն ամբողջությամբ հանել, քանի որ կարգն անդրադառնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները սահմանելու մասին»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	**Առաջարկության, առարկության հեղինակը**	**Առաջարկության, առարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**
1.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	որոշման նախագծի մեջ ուղղել վրիպակները «Լիազորություններ» բառի և 7 –րդ կետում «ներկայացուցիչներ» բառի վրիպակները, ինչպես նաև իրականացնել տեղեկանք-հիմնավորման տեքստում սրբագրական ուղղումներ:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
2.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	15-րդ կետի 4-րդ ենթակետում «դրա» բառը փոխարինել «նիստի» կրկնում է 1-ին ենթակետի բովանդակությունը	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
3.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	15-րդ կետի 6 –րդ ենթակետում «միջնորդում» բառը փոխարինել «դիմում» բառով	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
4.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	21-րդ կետում հստակեցնել, թե ինչպես է քարտուղարը նիստի մասին տեղեկացնում անդամներին, ինչ տեղեկատվություն է փոխանցում, ինչ եղանակով և ապահովում մասնակցությունը: Առաջարկում եմ թե՛ դեմառդեմ, թե՛ հեռավար նիստերի համար կիրառել ծանուցման նույն ընթացակարգը, խորհրդի անդամներին բոլոր նիստերի մասին ծանուցել էլեկտրոնային նամակով և նախապես ուղարկել օրակարգի հարցերի փաթեթները:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
5.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	16 –րդ կետի 6-րդ ենթակետից հանել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի օգնությամբ իրականացված» բառերը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն

6.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	22-րդ կետի վերջում ավելացնել «բանավոր կամ ընտրված միջոցի տրամադրած հնարավորությամբ՝ գրավոր» բառերը:	Ընդունվել է, լրացվել են «բանավոր կամ գրավոր» բառերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ